

**«ՀԱՅՆ ՈՒ ԳԻՆԻՆ, ՏԵՐ ԿԵՆՂԱՆԻՆ» ԲԱՆԱԶԵՎԻՑ ՄԻՆՉԵՎ
«ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ».
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ՈՒ «ՄԱՄՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍԸ**

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ամփոփում: *«Մասնա ծոեր» ազգային դրուագներգությունն իր բանահյուսական, ազգագրական, գեղարվեստական առանձնահատկություններով հայ միջնադարյան կյանքի յուրօրինակ հանրագիտարան է: Էպոսի բանավոր տարբերակներում կարելի է գտնել հայ միջնադարյան մշակույթի ու պատմության բազում արձագանքներ: Մասնավորապես էպոսի տարբերակներից մեկում հիշատակվում է «Ներսեսի աղոթք» անունով մի չափաժող հատված, որը էպոսի հերոսներին ուժ տվող «Հացն ու գինին, Տեր կենդանին» հայտնի բանաձևի ընդլայնված տարբերակն է: Այլ պատումներում հերոսները կարևոր իրադարձություններից առաջ անպայման հիշում են Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը: Այս և աղոթքների ու դրանց կիրառության հետ կապված այլ վկայություններ հնարավորություն են տալիս քննելու դրանց էպոսում հայտնվելու ճանապարհները, անդրադառնալու բանավոր էպոսի ու գրական ավանդույթի հարաբերության հարցերին, ինչպես նաև Ներսես Շնորհալի հայրապետի ու Գիլիկիայի մշակույթի՝ «Մասնա ծոերի» հետ ունեցած հնարավոր կապերի խնդիրներին: Ըստ այդմ էլ հոդվածում քննել ենք հետևյալ հարցերը.*

1. *«Հացն ու գինին, Տեր կենդանին...» բանաձևը ժանրային ի նչ պատկանելություն ունի՝ երդո՞ւմ է, թե՞ աղոթք:*

2. *Կարո՞ղ է այն ներշնչված լինել Ներսես Շնորհալու երկերով և հատկապես «Հաւատով խոստովանիմ» գործով:*

3. *Ինչո՞ւ է այս բանաձևը որոշ դեպքերում փոխարինվում «Հաւատով խոստովանիմ» աղոթքով:*

4. *Ինչո՞ւ են վիպասացները այս աղոթքի հեղինակ համարում Պարոն-Տեր Ներսեսին, հնարավոր է Ներսես Շնորհալի հայրապետին, և կարո՞ղ էր Ներսես Շնորհալին էպոսի ստեղծողներից լինել:*

*Հիմնաքառեր՝ Ներսես Շնորհալի, «Մասնա ծոեր», «Մասունցի
Դավիթ», Էպոս, «Հաւատով խոստովանիմ», «Հացն ու գինին»,
աղոթք, երգում, բանահյուսություն, միջնադարյան գրակա-
նություն*

Բանաձևը՝ երգում

Ավանդաբար մեզանում նմանատիպ համեմատական ուսում-
նասիրությունները բանավոր ու գրքային ավանդույթները
ներկայացնող երևույթների միջև ենթադրում են միջնադարյան
գրականության մեջ բանահյուսական ստեղծագործություննե-
րի, դրանց հերոսների, մոտիվների, արտահայտչամիջոցների
փնտրտուք՝ այդ ստեղծագործությունների պատմականության
որոշման նպատակով: Մենք այլ նպատակ ունենք, մեզ համար
կարևոր է ոչ թե այն հարցը, թե ինչպես է Շնորհալու ստեղծա-
գործությունը ազդվել կամ սնվել բանահյուսությունից, այլ
ընդհակառակը, ինչպես է բանավոր ավանդույթն ազդվել
գրքայինից¹:

Էպոսի բազմաթիվ տարբերակներում հանդիպող «Հացն
ու գինին...» սկսվածքով բանաձևը կազմված է հետևյալ հիմ-
նական մասերից՝ «Հացն ու Գինին/Տեր Կենդանին/Մարութա
Բարձրիկ Աստվածածին/Խաչ Պատարագին (Պատրաստին,
Պատերազմին)/Դավթի աջ թևին»:

Այս բանաձևի բաղադրիչները թեև ակնհայտ քրիստո-
նեական բնույթ ունեն, սակայն նախկինում մեկնաբանվել են
հին հեթանոսական-տոտեմիստական պատկերացումների
տեսանկյունից²: Չբացառելով նման ընկալման ու ընթերցման

¹ Բանավոր ու գրքային ավանդույթների հարաբերության մասին տե՛ս
Համբարձումյան Հ., Մասնա ծոեր. պատում, մոտիվ, գրքային ավան-
դույթ, Եր., 2018, էջ 235-277:

² Մասնավորապես բանագետ Սարգիս Հարությունյանը նշում է «Հացի
և գինու նախնական բնապաշտական ըմբռնումներն աղերսվել են
երկրագործության արդյունքները պարզևող և հովանավորող ոգիների
և աստվածությանը և, ըստ երևույթին, նույնացվել նրանց: Նման

հնարավորությունը՝ մենք կփորձենք դրանք մեկնաբանել բուն քրիստոնեական խորհրդաբանությամբ:

Բանաձևը հիմնականում կիրառում է Սասունցի Դավիթը, որոշ դեպքերում՝ Քեռի Թորոսը, ավելի հազվադեպ՝ մյուս հերոսները: Շատ պատումներում այն ընկալվում է ն՝ որպես աղոթք, ն՝ որպես երգում: Պատումների ակադեմիական հրատարակության ծանոթագրություններում Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք Օհանջանյանը նշում են. «Երդման և առհասարակ աղոթքի մի բանաձև, որ կրկնվում է գլխավորապես վեպի Մշու տիպի պատումներում: «Հաց ու գինին», - դա քրիստոնեական պատարագի «հաղորդություն» ասածն իսկ «տեր կենդանին» նույնն և, ինչ որ «աստված կենդանիս, ի հակադրություն կուռքերին, որոնք անկենդան են»¹: Թեև այստեղ երկու ժանրերը՝ աղոթքն ու երգումը գրեթե նույնացվում են, սակայն կան հստակ տարբերություններ, որոնք ի հայտ են գալիս նաև էպոսում:

Որպես երգում այն հանդես է գալիս, օրինակ, առաջին ճյուղում, երբ Ադրամելիքը երգվում է տունը կառուցել հզոր ջրի ակունքին.

Ետեխ Ադնամելիք երթում երեց.
– Հացն ու գինին, Տեր կենդանին,

ըմբռնման մի արձագանք է մեր նոր ժողովրդական վեպում հերոսների կողմից հաճախ վկայակոչվող «Հացն ու գինին, տեր կենդանին» բանաձևը, որ արտաբերում են վեպի հերոսները որևէ նախաձեռնություն սկսելուց առաջ ապավինելով բանաձևի սրբազան գործությանը: Հացի և գինու կենդանության կամ կենդանացնող Տիրոջ (իմա՝ աստծու) հետ այս նույնացումը, հարկավ, առաջին հայացքից կարող է քրիստոնեաբար ըմբռնվել, ինչպես պատարագի արարողության մեջ է ընդունված, սովորաբար: Բայց հացին ու գինուն նախապատվություն տալն ու այն կենդանություն պարգևող ոգի ըմբռնելը վկայում է բանաձևի գաղափարախոսության հեթանոսական-տոտեմիստական բնույթը»: Տե՛ս **Հարությունյան Ս.**, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Եր., 1975, էջ 232:

¹ Սամա ծոեր, հատոր Բ, մաս Բ, Եր., 1944, էջ 849:

Եդ ջրի ազ որտեխ եղավ,
Մըր տուն ոնի կը շինիս¹:

Երդվում է նաև Փոքր Մհերը, երբ կաղզվանցիներից վրեժ է լուծում հոր մահվան համար.

Ետեխ Մհեր երթում երեց, ըսեց.
«Հացն ու գինին, Տեր կենդանին.
Կաղզվղնու կը կտրիմ,
Երթամ, ելնիմ հարի Սասուն»:

(ՄԾ, հատ. Բ, պատ. Ը, էջ 329)

Մեկ այլ դեպքում Դավիթը, երբ Չմշկիկ Սուլթանը կռիվ է ուզում և նա ցանկանում է հետաձգել այն.

Չմշկե Սուլթան կ'ասի.– Դե՛, հերդում երա՛
«Խաց-գինին, Աստված կենդանին,
Մարութա Բանցրիկ Աստվածածին,
Խաչ Պատերազմին վիր Դավթի աջ թեվին,
Իրիք օրից սորա կը գամ խիտ քի կռիվ»:

(ՄԾ, հատ. Ա, պատ. ԻԳ, էջ 1019)

Որոշ պատումներում Դավիթը հիշում է միայն Խաչ Պատերազմին կամ Պատերազմին, քանի որ խոսքն ուղեկցվում է որոշակի ծիսական գործողությամբ. հերոսը ձեռքը դնում է Խաչին ու նոր երդվում: Բանաձևի մյուս բաղադրիչներն այս դեպքում բացակայում են:

Այլ պատումներում Դավիթը երդվում է ապագա կնոջ՝ Խանդութի հետ հանդիպման միջադեպում, երբ վերջինս ապտակում է նրան՝ չթույլատրված համբույրի համար.

¹ Սասնա ծռեր, հատոր Բ, պատում Ը, Եր., 1944, էջ 261: Հետայսու էպոսի մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծերի մեջ: Մեջբերումները կատարվում են հետևյալ հրատարակություններից. Սասնա ծռեր, հատ. Ա, 1936, հատ. Բ, մաս Ա, 1944, մաս Բ, 1951, հատ Գ, 1979, հատ Դ, 1999, Սասունցի Դավիթ, 1977:

Ու երդում կերավ, ըսավ.

«Հացն ու գինին, Տեր Կենդանին,

Մի հատ գուրգ պըտի զարգիմ»:

Երդում կերավ, վերջացավ, պըտի զարգա:

(ՄԾ, հատ. Բ, պատ. Թ, էջ 400)

Էպոսի առաջին գրառված՝ Տարոնցի Կրպոյի պատումում Քեռի Թորոսը երդվում է չխմել, մինչև Մարում գերության մեջ գտնվող տղաներին չբերի Սասուն.

Մարամելիքն իգա, տանի գմբը ճժեր.

ԶԱբամելիքի տղեկները գըրթըփե,

Յես նստիմ հողա, կերուխում ենեմ,

Ամոթ չե՝ մըզի...

Հաց գինի ու Տեր Կենդանի,

Քըն զըդ կըթխեն եվել խմած չեղնիմ.

Ելնեմ երթամ, իմ ճժերուն երեվան:

(ՄԾ, հատ. Բ, պատ. Ա, էջ 18)

Եթե վիպասացը այս բանաձևն ընկալում է որպես երդում, ինչպես վերևում բերված հատվածներում է, ապա այս դեպքում էականությունն է ստանում, ոչ թե խոսքի բուն ազդեցությունը գործողությունների վրա, որքան պարտավորությունը կատարելու ինչ-որ բան: Այս դեպքում բանաձևում թվարկվող համաքրիստոնեական և տեղային սրբությունները՝ «Հացն ու գինին», այսինքն՝ Սուրբ պատարագն ու Հաղորդության խորհուրդը, «Կենդանի տերը»՝ ենթադրաբար Հին Կտակարանի Հայր Աստված, ապա նաև սասունցիների ամենապաշտելի սուրբը՝ Մարութա սարի Սուրբ Աստվածածին եկեղեցին ու նրա պարզևած խաչը, գործողության կատարման երաշխավորներն են:

Այս բանաձևի երդման նշանակությունը փաստվում է ոչ միայն էպոսի հատվածներով, այլև Հին Կտակարանի հետ համեմատությամբ: Այս խոսքի երկրորդ բաղադրիչը՝ «Տեր Կենդանին» կամ «Աստված Կենդանին» արտահայտությունը

Հին Ուխտում ամենատարածված երդման ձևերից է և նշանակում է, որ Աստված ներկա է, վկա է խոսքին: Նույնիսկ Հին Կտակարանի աշխարհաբար թարգմանություններում այն հաճախ փոխարինվում է «Աստված վկա է» արտահայտությամբ:

Օրինակ՝ Թագավորությունների առաջին գրքում.

«Պատասխանի ետ Դաւիթ եւ ասէ ցՅովնաթան՝ Գիտելով զհտէ հայր քո զի գտի շնորհս առաջի աչաց քոց, եւ ասէ թէ՝ Մի՛ զհտասցէ Յովնաթան, գուցէ ոչ կամիցի՝ այլ կենդանի է Տէր եւ կենդանի է անձն քո, զի որպէս ասացի՝ վճարեալ է ընդ իս եւ ընդ հայր քո մինչեւ ցմահ»:

Նույնը՝ «Էջմիածին» թարգմանության մեջ.

«Պատասխան տուեց Դաւիթը Յովնաթանին՝ ասելով. «Քո հայրը լաւ գիտի, որ ես շնորհ եմ գտել քո աչքում, եւ դրա համար էլ կը մտածի, թէ Յովնաթանն այդ մասին թող չիմանայ, թէ չէ դժգոհ կը լինի: Բայց վկայ է Տէրը, եւ վկայ ես դու, որ, ինչպէս ասացի, ինձ մի քայլ է բաժանում հորդ նիւթած մահից» (Թագ. 1, 20.3):

Այս թարգմանությունը թեև հատվածի իմաստին ընդհանուր առմամբ համապատասխանում է, սակայն իրականում խամրում է Աստծո կենդանի ներկայության գաղափարը, ինչն էլ Աստվածաշնչում շեշտվում է անկենդան կուռքերի հետ հակադրության նպատակով: Այս առիթով կարող ենք հիշել Հին Կտակարանի Դանիել մարգարեի գրքի այն հատվածը, որտեղ Բելիւն մատուցվող սննդի քանակը Աստիագես թագավորն ընկալում է որպես նրա կենդանություն-ներկայության, նաև զորության նշան. *«Եւ էին կուռք մի Բաբելացոց անուն Բէ՛լ. և ելանէր ի նմա ռոճիկ՝ աւուր միոց, նաշիհ՝ երկու տասան արդու. և քառասուն ոչխար. և զինի վեց մար: Եւ թագաւորն պաշտէր զնա. և երթայր հանապազ երկի՛ր պագանէր նմա: Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ. և ասէ զնա թագաւորն. Դու ընդէ՛ր ո՛չ երկիր պագանէս Բելայ: Եւ նա ասէ. Քանզի ո՛չ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստո-*

ւած կենդանի զԱրարիչն երկնի և երկրի, որ ունի իշխանութիւն ամենայն մարմնոյ: Եւ ասէ զնա թագաւորն. Իսկ Բէլ ընթրոյի քեզ թէ իցէ Աստուած կենդանի. եթէ ընթրեսիցես՝ որչափ՝ ուտէ և ըմպէ հանապազ: Եւ ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի՛ խաբիր արքայ, զի դա է ի ներքոյ կաւեա յ, և արտաքոյ պղնձի. ընթրեալ դորա երբեք՝ և ընթրեալ» (Դանիէլ ԺԴ 1-6):

Թեև «Աստված Կենդանին» երդման հանգամանքով այս բաղադրիչը ավելի շատ Հին Կտակարանի հետ է կապվում, սակայն Աստծո, այս անգամ ոչ թե Հոր, այլ Որդու կենդանության ու կենդանացնող գործության նշանակությունը նաև հենց Սուրբ Հաղորդության խորհրդով գտնում ենք Նոր Կտակարանում՝ Հովհաննեսի Ավետարանում. «Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հոր. եւ որ ուտէն զիս՝ եւ նա կեցցէ վասն իմ» (Հովհ. 6:58):

Այս դեպքում «Հացն ու գինին, Տեր Կենդանին» արտահայտությունը մեկնաբանելի է Նոր Կտակարանի ու Սուրբ Հաղորդության խորհրդի համատեքստում:

Բանաձևը՝ աղոթք

Որպէս աղոթք՝ այս հմայական բանաձևը Էպոսի կենտրոնական հերոս Սասունցի Դավիթը հիմնականում արտաբերում է մենամարտից առաջ Մարա Մելիքի դավադրությամբ հորում հայտնվելու միջադեպում, երբ Ձենով Հովանը նրան հիշեցնում է այս տոհմական խոսքի մասին: Հերոսն այն ասելուց հետո ուժ ստանալով՝ դուրս է գալիս հորից: Այս բանաձևը Դավիթը կիրառում է նաև կովին նախորդող փորձության Պողպատի սյունը կիսելու միջադեպում, ապա նաև հենց Մելիքի հետ մենամարտի ժամանակ:

Հերոսին ուժ տալու, նեղ վիճակից դուրս բերելու գործառնություններով ժանրային առումով այս բանաձևը հստակորեն սահմանելի է որպէս աղոթք: Այն կիրառվում է տոհմիկ կամ ազգային սրբությունների հետ կապը նորոգելու, դրանց միջոցով ուժ ու գործություն ստանալու նպատակով: Օրինակ՝ ինչ-

պէս զավաշցի Համբարձում-Խապո Գրիգորյանի տարբերակում է, որտեղ Դավիթն աղոթքն ասում է Խանդութի թշնամիների հետ կովէլիս՝ վտանգից ազատվելու համար.

Էն ժամանակին Ձենով Հովան կանչից.— Դա՛վի՛թ...

Դավիթ խասկըցավ՝ իր խորոխապոր ձենն էր:

Խորոխապեր ասաց.– Դա՛ վի՛թ,

Հիշիր խաց-գինին, Աստված կենդանին,

Մարութա Բանցրիկ Աստվածածին,

Իսկ Պատերազմին վեր Դավթի աջ թևին:

Դասվիրթ հիշից:

Հիշելուն պես Դավիթ կտրճացավ, գնջիլնիր կտրից

(*U* $\overline{O}$, *h**w**u**n*.*U*, *y**w**u**n*.*F**Q*, *Ł*₂ 116):

Եթե այս բանաձևը վիպասացը որպես աղոթք է ընկալում և ներկայացնում, ապա հերոսն ապավինում է թվարկված սրբություններին՝ Սուրբ Պատարագին ու Հաղորդությանը, Մարութա Սուրբ Բանցրիկ Աստվածածին եկեղեցուն և մեծ մասամբ այդ սրբավայրի միջոցով հերոսներին պարգևված պահապան հմայիլին՝ Պատերազմի, Պատարագի կամ Պատրաստի թռչող խաչին:

Այս գործառնությունով ու նշանակությամբ այս աղոթքը կապվում է հմայական բանավոր ու նաև գրավոր այլ բնագրերի հետ: Եվ որոշ դեպքերում մենք տեսնում ենք բանավոր ու գրավոր աղոթքների ուշագրավ համադրություններ:

Օրինակ, Շատախցի Ռաշո Զալոյանի պատումում.

Ըսաց.- Յա՛, Տէր Կենդանի՛ն,

Որդի՛ն Միաճին,

Մարութա Պանցրիկ Աստվածածի՛ն,

Խաչ Պատրաստի վրո Տավթի աջ թիվին.

Հիշյա՛ գՏեր Որդիհն:

(*UÖ*, *hwmn.* 9, *ywmn.* 7, *Ł* 144)

Գրաբարյան նախդիրների ու գրավոր աղոթքների արտահայտչաձևերի առկայությունը այս տարբերակում մատնանշում է եկեղեցական արարողությունների մեջ կիրառվող աղոթքների ազդեցություն: Ուշագրավ է, սակայն, որ այս պատումը գրառվել է 1972 թ. Խորհրդային Հայաստանում՝ անասոված հասարակարգի պայմաններում: Ընդ որում, այս նույն վիպասացից էպոս գրառվել է նաև 1933 թ., սակայն այնտեղ աղոթքի հատվածում գրաբարյան այս ձևերը բացակայում են: Վիպասաց Ռաշոն անգրագետ էր, հետևաբար այս ազդեցությունը գրքերից չի գալիս, այլ գուցե եկեղեցական արարողությունների մասնակցությունից որը նույնպես դժվար պատկերացնելի է սովետական իրականության պայմաններում: Այն, որ գրավոր աղբյուրների ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ բանավոր փոխանցված աղոթքները որոշ փոփոխությունների են ենթարկվում, փաստվում է բազմաթիվ պատումներով: Օրինակ՝ մեկ այլ՝ սասունցի Օհան Գասպարյանի՝ 1919 թ. գրառված պատումում թվարկվող կայուն սրբությունների շարքը համալրում է Սուրբ Սարգիսը.

- Հիշեցի զԱստվածածի՛ն,
Սուրբ Պատարագ խա՛չ վըր աջիկ փիջին,
Հա՛ցն ու գինին, Տե՛ր կենդանին,
Յա՛ մուրադատուր Սուրբ Սարգիս,
Հավարի՛ս հասնիս:
Մսրա Մեկիք զուր գուրգ զարկե՛ց.
Օր զարկեց,
Սուրբ Սարգիս զԴավիթ թոռ՛ւց ըղտելեն,
Վե՛ր բանձրցուց:

(ՄԾ, հատ. Դ, պատ. Ա, էջ 108)

Ժողովրդի սիրելի Սուրբ Սարգիսը, կովի պահին փաստորեն Դավիթին բարձրացնում ու փրկում է Մեկիքի հարվածներից: Էպոսի այլ տարբերակներում այս գործն անում են հրեշտակները: Սուրբ Սարգսի կերպարը այլ պատումներում նույնպես հանդիպում է, ընդ որում, նշվում է, որ Սասնա ծռե-

րը Սուրբ Սարգսի «փոքերն» (փոքրերն) են և օտար միջավայրում Սարգսի ընտանիքին պատկանելը համարվում է Ծոերի ինքնության նշում (ՄՕ, հատ. Բ, պատ. Բ, էջ 86-87): Սարգիսը պատումներում կոչվում է «Ծուռ Սրգո»: Ընդ որում, Սուրբ Սարգիսը հանդես է գալիս հերոսների պահապան Խաչի հետ կապված միջադեպում, երբ Դավիթը մոտենում է, որ Սուրբ Սարգսին համբուրի, Սուրբն ասում է, որ նախ ինքը պետք է Դավթի Սուրբ Նշանը համբուրի: Բացի դրանից պատումներից մեկում հիշվում է որպես Ձենով Սարգիս (ՄՕ հատ. Բ, պատ. Է), որը Ձենով Հովանի եղբայրն է և Դավթի հորեղբայրը:

Բերված օրինակները փաստում են, որ ինչպես շատ այլ դեպքերում բանավոր տեքստի նույնիսկ ամենակայուն հատվածները, ինչպիսին, օրինակ, երգերն ու աղոթքներն են, տարբեր ազդեցություններով կարող են լեզվաոճական ու բովանդակային փոփոխություններ կրել, կորցնել որոշ բաղադրիչներ ու նոր հավելումներ ստանալ¹: Բանավոր բնագրի փոփոխությունների այս ընթացքի մեկ այլ արտահայտություն գտնում ենք արդեն կապված Սուրբ Ներսես Շնորհալու հետ: Մոկացի Վարդանի պատումում՝ պողպատե սյունը կիսելու դրվագում, այս աղոթքն ուղղակի փոխարինվում է «Հաւատով խոստովանիմ»-ի հիշատակությամբ.

Պողվըտե սուն ըռաստ եկավ.

Թուր Կեծակին քաշից, ասաց. «Խավատամ, խոստովանիմ»,

Թուր թալըց սան. թուր կեծակին ենե՛նց կտրից,

Մեկ-մեկից ընցավ, սուն կալամի վերեն կանգնավ:

(ՄՕ, հատ. Ա, պատ. Ը, էջ 355)

Ուշագրավ է, որ 1901 թ. գրառված այս պատումի գրառողը՝ Սարգիս Հայկունին, վկայում է, որ վիպասացը «Հայր մեր»-ի պես անգիր է արել էպոսը, պատմելու ընթացքում աշ-

¹ Աստվածաշնչային կերպարների՝ էպոսի դիպաշարում ունեցած գործառնությունների մասին տե՛ս **Համբարձումյան Հ.**, Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, էջ 252-264:

խատում է ոչինչ չփոխել, քանի որ դա սրբապղծություն է համարում. «Նա Մոկաց գավառեն դուրս գալեն վերջը՝ բնակած է այնպիսի կղզիացած նահապետական գյուղեր, որ չէր կարող յուր գիտցածին վերա մի նախադասություն անգամ ավելացնել կամ պակասեցնել. նա իբրև Աստուծոմե շնորհյալ մի ավանդ կը պատմեր. շատ անգամ լրջաբար կգայրանար այն անձանց վերա, որ յուր գիտցածին ավելի կը պատմեն, և այդ ավելին հերյուրված, շինծու կը համարեր, հետևաբար ասելն ևս մեղք, քանի որ «Ողորմիներ» կան: Ինչ որ ավանդված է, այնպես ասելու է, - կասեր» (ՄԾ, հատ. Ա, էջ 329): Կարելի է ենթադրել, որ «Հաւատով խոստովանիմ»-ը «Հացն ու գինին, Տերը Կենդանին» աղոթքին փոխարինել է Վարդանից առաջ նրա ուսուցիչ վիպասացների տարբերակներում:

Մեկ այլ տարբերակում Ներսես Շնորհալու աղոթքը Դավթին պաշտպանում է հենց կենտրոնական մենամարտի ժամանակ.

Մարամելիք երեք սհաթի ճամբա մեկնալ
Ու իշտապով եկալ գուրգ մի զարկեց, ու ասեց.

– Հող ես, հող դառնաս:

Դավիթ ասեց.

– Հավատամ խոստովանիմ

Բարձրիկ Մարաթուկ սուրբ Նշան,

Յես հըմալ եմ՝ քընց կանաչ կարմիր չաղրի տակ,

Բրընձ-փիլավ կ'ուտեմ:

Իրեք անգամ ըդ ավա

Գնաց, եկալ, զարկեց ու ասեց.

– Հող ես, հող դառնաս:

Դավիթ լե իրեք անգամ՝

«Հավատամ խոստովանիմ» ասեց:

(ՄԾ, հատ. Բ, պատ. Ա, էջ 29)

Աղոթքի հեղինակն ու հիշեցնողը

Ո՞վ է աղոթքի հեղինակը կամ սովորեցնողը: Էպոսում ավելի հաճախ աղոթքը հիշեցնում են: Հիշեցնողների դերում

են Դավթի հորեղբայր Ձենով Հովանը, հերոսի ձին՝ Քուռկիկ Ջալալին: Բայց վկայություններ կան նաև սովորեցնողների մասին: Օրինակ՝ գավաշցի Համբարձում Խապո-Գրիգորյանի պատումում աղոթքը սովորեցնում է հերոսի երագում հայտնված Աստվածածինը.

Դարձավ ել մ' ել եկավ, քանավ:
Քնիլու մեջ երագ տեսավ՝
Մարութա Բանցրիկ Աստվածածին
Եկավ էնոր երագ, ասաց.
«Ի սն իմ Մարութա Բանցրիկ Աստվածածին,
Խաց-գինին, Աստված կենդանին,
Խաչ Պատերազմին վըր Դավթի աջ թևին»:
Խըլիսուն վիր ելավ, տիսավ,
Վոր Խաչ ինկիր ա վար թևին:

(ՄԾ, հատ Ա, պատ. ԻԳ, էջ 999)

Նույն պատումում Դավթին տոհմական աղոթքը հիշեցնում է Քուռկիկ Ջալալին Մելիքի գորքից նրա վախի միջադեպում.

Ենգախ Աստրծու խրամանաքով՝
Քուռկու Ջալալուն լիզու եկավ, ասաց.
– Դու ի՞նչ վախեցար, Դավի՛թ.
Քանի մ' դու կոտորիս:
Ենցկոմ իմ սիրտ կը կոտորա.
Քանի մ' դու կոտորիս,
Ենցկոմ իմ վոտքիրու առջեվ կը կոտորվին:
Հիշա խաց-գինին, Աստված կենդանին,
Մարութա Բանցրիկ Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր Դավթի աջ թևին,
Քեշի Թուր կեծակին, ընկի մեջ ասքարին:

(ՄԾ, հատ. Ա, պատ. ԻԳ, էջ 1007-1008)

Տարբերակներից մեկում Դավթին աղոթքը հիշեցնող կինը հիշում է նաև Պարոն-Տեր Ներսեսին.

–Առաջ կ'երթաս Յոթ-Ճող-Ծամ Գուհարին կ'ասես, որ քե
ուսուցի Պարոն-Տեր Ներսեսի աղոթք:

Սանասարն ասաց.

– Ես են աղոթք կիտեմ, գաթի ինոր վերեն էլ ավելցուցեր
ենք էս պան.

«Հիշի խացն ու կինին, Տեր կենդանին,

Մարութա Պանցր Ասպածածին,

Որ Խաչ Պատրաստին

Խաչվի Սանասարի աչ թիվին»:

– Խա, Սանասար, մկա կիտեմ, որ տու էդ աղոթքի շնոխ-
քով պիտ աղթես քո թշնամուն: Աման քե ասեմ, թե ի՞նչ անե-
լու էս էնիկ աղթելուց վերջ:

(ՄԾ, հատ. Բ, պատ. ԺԶ, էջ 400)

Այսինքն՝ Պարոն-Տեր Ներսեսի աղոթքը այս պատումում
ընկալվում է որպես հերոսին ծանոթ առանձին միավոր, որի
վրա էլ Ծոերը ավելացրել են իրենց աղոթքը: Այստեղ Պարոն
Տեր-Ներսեսը առաջին ճյուղի երկվորյակ հերոսների պապն
է, հերոսուհի Սանդուխի հայրը: Նրան ողորմի է տրվում պա-
տումի սկզբում: Շարունակության մեջ հերոսները նրան
միշտ հիշում են որպես ժառանգաբար փոխանցվող աղոթքի
հեղինակ: Այս հատվածում ուշադրության արժանի է, ոչ
միայն աղոթքի հեղինակի հիշատակությունը, այլև նրա
տիտղոսը՝ Պարոն-Տեր, որն առանձին քննության նյութ է: Մի-
ջին դարերում հայոց մեջ տարածված այս տիտղոսը ներկա-
յացնում էր հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միաս-
նությունն ու սեփականության միասնական տնօրինությու-
նը¹: Այս առումով Ներսես Շնորհալին՝ որպես Պահլավունի-
ների իշխանական տան ներկայացուցիչ, միավորում էր եր-
կու իշխանությունները: Էպոսի մի քանի պատումում Պարոն
տիտղոսով հիշատակվում է նաև Սասունցի Դավիթը, երբ

¹ Պարոնտերության մասին տե՛ս **Թորոսյան Վ.**, «Պարոնտերության
ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV
դդ.)», ԼՀԲ, 2011, 1-2, էջ 30-42:

խնջույք է անում այն ժամանակ, երբ Կոզբադինը ավիրում է վանքը, կամ երբ վտանգի մեջ է.

«Հիշամ քեզ հերն ի կենդանին,
Մարութա Բանձր Աստվածածին,
Խաչն ը Պատարագին,
Դո՛ւ պահապան եղնիս պարոն Դավթին»:
(ՄԾ, հատ. Բ, պատ. Բ (Բ տարբերակ), էջ 78, ծնթ.)

Նույն պատումում արդեն Լուռա Համգա փահլևանների հետ կովի ժամանակ Դավիթը իր աղոթքում հիշատակում է նաև «Հիսուս Որդուն»:

Առան իրար Դավթն ու եղ երկու փահլիվան՝
Գուրգ ու քեվալով որ մի յար իրիկուն:
Դավիթ կանչեց.
«Յա՛ հավատամ խոստովանիմ,
Բանձրիկ Մարաթուկ սուրբ Նշան,
Հիսուս Որդի, դու օգնական»:
(ՄԾ, հատ. Բ, պատ. Ա, էջ 37)

Հնարավոր է ենթադրել, որ Փրկչի ներկայացման այս ձևը կարող է կապված լինել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմի հետ: Միջնադարյան բազմաշնորհ հայրապետի՝ Ներսես Դ Կլայեցու անվան կամ ստեղծագործությունների հիշատակությունները պատահական չեն, քանի որ մասնավորապես «Հաւատով խոստովանիմ»-ը(1154) թերևս «Հայր մեր»-ից հետո ամենահայտնի ու տարածված աղոթքն է հավատացյալների շրջանում: Օրվա 24 ժամերին ասվելու համար նախատեսված, համապատասխան 24 տուն ունեցող այս գորավոր աղոթքը արդեն 15-րդ դարից ներմուծվել է Հայ առաքելական եկեղեցու ժամերգության մեջ, ապա նաև տեղ գտել ձեռագիր, ապա տպագիր Սաղմոսարաններում Սուրբ Գիրգոր Նարեկացու «Մատենան...»-ից հատվածների ու աստվածաշնչյան Դավիթ թագավորի սաղմոսների հետ միասին:

Այս աղոթքը՝ որպես պաշտպանիչ գործություն ունեցող հմայական բանաձև, մեծ տարածում է գտել նաև հմայլիններում: Գալարաձև այս «մատյանները» աղոթքներ, աղերսներ, հմայքներ, ժողովրդական դեղատոմսեր պարունակող ժողովածուներ էին, որոնք հմայիլի տերերը պահում էին իրենց մոտ ու ապավինում դրանց գործությանը: «Հաւատով խոստովանիմ»-ը հմայիլներում հանդիպում է Ներսես Շնորհալու մանրանկարի հետ միասին: Հմայիլներն իրենց բովանդակությամբ ու բնույթով մոտենում են Սասնա հերոսներին պաշտպանող Խաչ Պատերազմին կոչվող սուրբ նշանին: Այն, ըստ էպոսի, մտե խաչ է նրանց աջ ձեռքի վրա կամ հերոսների մոտ պահվող առարկայական խաչ, որը, ինչպես տեսանք, ոչ միայն պաշտպանում է հերոսներին, դուրս բերում ծանր իրավիճակներից, այլև ըստ էպոսի որոշ տարբերակների՝ ցույց տալիս հերոսների ազգային-կրոնական ինքնությունը այլադավան միջավայրում: Այսպես, Փոքր Մհերը հանդիպում է Կույ Դևին և ասում է այս աղոթքը.

Դև ելաց, եսաց.– Տու հիշացիր խացն ի գինին,
Տու Բաղդասարի տղեն իս

(ՄԾ, *հատ. Ա, պատ. Ե, էջ 238*):

Ինչպես տեսանք վերևում, այս աղոթքով ու Սուրբ Սարգսի հետ ազգակցությամբ հերոսները տարբերվում են օտար միջավայրում: Նաև պետք է հիշենք, որ Խաչ Պատերազմին այն նշանն է, որով կռվից հետո ընկածների դիակների մեջ Խանդութը պետք է փնտրի ու գտնի Դավթի մարմինը:

Ազգային կրոնական ինքնության հաստատման այս դեպքում կրկին «Հացն ու գինին, Տեր կենդանին» բանաձևը իր գործառնությամբ մոտենում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքին: Երկուսն էլ կրոնական ինքնության մասին հայտարարություն են, Հավատամք, համենայն դեպս, այդպես են ընկալվում: Ըստ Ներսես Շնորհալու աղոթքի նախաբանի՝ այդպիսի գործառնությամբ ունի այդ աղոթքը. «Ապայ թէ

պղերզ որ լինիցի եւ ծուլանայ զհինգ աղաթսն կատարել, աղաթեսցէ չորս անգամ, կամ գ., կամ բ. եւ կամ մի անգամ յաւուրն, որ միայն ճանաչի, թէ քրիստոնէայ է, եւ զինքն ծանիցէ, թէ արարած է Աստուծոյ եւ երկրպագու նորա»¹:

Եթէ աղոթքը դիտում ենք որպէս Հավատամք, ապա կարող ենք այն գուգահեռել «Հայր, Որդի և Սուրբ Հոգի»՝ Սուրբ Երրորդության գաղափարին: Այս դեպքում կտեսնենք՝ «Հացն ու Գինին»՝ Որդու խորհրդով, «Աստված Կենդանին»՝ Հոր նշանակությամբ, Թոշող խաչը՝ «Խաչ Պատարագին»-ը՝ Սուրբ Հոգի խորհրդով, հավելելով նաև տեղային սրբությունն ու տիրամոր պաշտամունքը՝ «Մարութա Սուրբ Բանցրիկ Աստվածածինը»:

Փրկչի սպասում

Անկախ, իհարկէ, տարբեր կիրառություններից ու Սուրբ Ներսէս Շնորհալու և նրա ստեղծագործությունների ուղղակի հիշատակություններից՝ հետաքրքիր է, արդյո՞ք կան արվեստի, լեզվի ու ոճի ընդհանրություններ: Իհարկէ, կարող ենք հիշել Սուրբ Ներսէսի էպիկական երկերը՝ «Վիպասանությունը», «Ողբ Եդեսիոն», առանձին գործերում հանդիպող էպոսի հետ ընդհանուր արտահայտչամիջոցներ և այլն, սակայն այստեղ կնշենք միայն գաղափարական հնարավոր ընդհանրությունների մասին:

Պատմաբան Հարություն Թուրշյանը 1960-ական թվականերին գրված, բայց միայն 2013 թ. հրատարակված աշխատության² մեջ էպոսի որոշ միջադեպեր մեկնաբանում է Եգիպտոսի հայ գաղութի, Պահլավունների իշխանական տան գործունեության և ընդհանրապես այդ դարաշրջանի իրադարձությունների համատեքստում: Նա հակված է կարծելու, որ մեր ազգային էպոսը Պահլավունիների իշխանական տան

¹ Մատենագիրք Հայոց, ԻՍ հատ, գիրք Ա, Եր., 2018, էջ 1204:

² **Թուրշյան Հ.**, Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձություններն ու «Սասունցի Դավիթ» էպոսը, Եր., 2013:

տոհմիկ վիպասանությունն է, և Ներսես Շնորհալու, ապա նաև նրան հաջորդող Պահլավունի իշխանների ու հոգևորականների հայրենասիրական գաղափարները որոշակի ազդեցություն են ունեցել էպոսի թեմատիկ-բովանդակային առանցքի ձևավորման վրա: Գրքի առանձին «Ներսես Շնորհալի» ենթագլխում հեղինակը փորձում է ցույց տալ էպոսում նկարագրվող իրադարձությունների ու Շնորհալու ժամանակի, Գողիաթին Դավիթ թագավորի հաղթելու մասին պատմության ու հայոց մեջ այդպիսի առաջնորդի սպասումների միջև: Սա տեսնում ենք հատկապես «Յիսուս Որդի» երկում:

Իհարկե, տեսականորեն հնարավոր է էպոսի որոշ մոտիվների տարբեր ժամանակներում կրկնության ու համապատասխանությունների առկայությունը, նաև, իհարկե, դժվար ժամանակներում Դավթին նմանվող փրկչի, առաջնորդի սպասումների մոտիվները համեմատել ու գտնել զուգահեռներ, սակայն դրանք, որպես կանոն, ընդհանրական երևույթներ են և դարաշրջանից-դարաշրջան կրկնվող: Հատկապես մեր ազգային էպոսի պարագայում: Այստեղ իրացվող շատ գաղափարներ, մասնավորապես առաջնորդի, փրկչի գալստյան սպասումները զարմանալի կենսունակությամբ վերստին բարձրանում են անցյալի փոշիներից ու ձգտում լուծել ներկայի խնդիրները¹: Այս դեպքում կարող ենք արձանագրել, որ Շնորհալու ապրած ժամանակաշրջանի, նրա երկերում իրացվող հայրենասիրական որոշ գաղափարներ, կարող էին արձանագրվել բանավոր էպոսում, սակայն, այդուհանդերձ. չենք կարող պնդել, որ «Սասնա ծռերը» Պահլավունիների տոհմիկ վիպասանությունն է, համեմայն դեպս, առայժմ: Քանի որ իր ծագմամբ, տեղագրությամբ այն կապված է Արծրունիների ու Գնունների, որոշ մոտիվներով Բագրատունիների ու Մամիկոնյանների հետ, սակայն, իհարկե,

¹ Էպոսի արդիականացման, գրականության մեջ ու հանրային-քաղաքական դիսկուրսում նոր ընթերցումների ու կիրառությունների մասին տե՛ս **Համբարձումյան Հ.**, Անկախության «Սասնա ծռերը» էպոսը հայ արդի գրականության մեջ և հանրային դիսկուրսում, Եր., 2021:

հիմնական կառուցվածքով ու առանցքային մոտիվներով, այն շատ հին արմատներ ունի:

Եզրակացություններ

«Հացն ու գինին, Տեր Կենդանին» բանաձևը Էպոսի տարբերակներում երկակի կիրառություն ունի՝ որպես երգում և որպես աղոթք: Առաջին դեպքում, այն, ըստ մեզ, մեկնաբանելի է Հին Կտակարանի հետ կապերով:

Որպես աղոթք՝ այս բանաձևը կապեր է դրսևորում ժողովրդի մեջ տարածված գրավոր ու բանավոր աղոթքների հետ, համալրվում նոր սրբություններով ու կերպարներով:

Էպոսի տարբերակներում Ներսես Շնորհալու երկերի հիշատակությունը, հերոսներին ուժ տվող, պահապան բանաձևի հետ համադրությունները կարող են պայմանավորված լինել մի քանի հանգամանքով՝

1. Ժանրի ու գործառույթների նմանությամբ, այն է՝ պահպանիչ աղոթք, նաև հավատո հանգանակ ու կրոնական ինքնության մասին հայտարարություն: Ինչպես և Շնորհալու աղոթքը, Օտերի այս հմայական բանաձևը առաջին հերթին Հավատամք է, որը ունի մեկ այլ կարևոր գործառույթ՝ այլադավանների միջավայրում կրոնական ինքնության ընդգծումը:

2. Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի հոչակով ու տարածվածությամբ. «Հաւատով խոստովանիմ»-ը ժողովրդական միջավայրում մեծ ազդեցություն ու հեղինակություն է ունեցել և հայտնի է եղել «Ներսեսի աղոթք» անունով: Էպոսի ասացողները հավատում են, որ իրենց պապենական աղոթքի հեղինակը նույնպես Հայր Ներսեսն է, կամ իրենց աղոթքը կապված է այդ աղոթքի հետ: Այս երևույթին ամենայն հավանականությամբ նպաստել է նաև այն հանգամանքը, որ 17-րդ դարից սկսյալ հրատարակվող աղոթագրքերում, սաղմոսարաններում, նմանատիպ այլ ժողովածուներում ու հմայիկներում Սուրբ Ներսեսի աղոթքը՝ «Հաւատով խոստովանիմ»-ը, մշտապես ընդգրկվում է, ընդ որում մեծ մասամբ նախորդում է Դավթի սաղմոսներին: Այս

դեպքում հնարավոր է նաև որոշակի շփոթ՝ պայմանավորված թեմատիկ ընդհանրությամբ ու հերոսների անունների նույնությամբ:

3. Եվ վերջապես, կան գաղափարական ընդհանրություններ. Մասունցի Դավիթը, նրա որդի Փոքր Մհերը որոշ վիպասացների կողմից, ինչպես նաև հետագա հավաքական մշակութային գիտակցության մեջ ընկալվում են որպես երկար սպասված փրկիչներ, Աստծո ընտրյալ թագավորներ, իսկ նմանատիպ սպասումներ ու գաղափարներ, անտարակույս, իրացվում են և Ներսես Շնորհալու ստեղծագործության մեջ: Բացի սրանից՝ և՛ էպոսում, և՛ Շնորհալու ստեղծագործության մեջ կարևորագույն նշանակություն ունեն հավատի, տոհմական կամ ազգային արժանապատմության, ի վերջո, ինքնության պահպանման գաղափարները:

Գրականություն

1. Թորոսյան Վ., Պարոնտերության ինստիտուտի ձևավորումն ու զարգացումը Հայաստանում (XI-XIV դդ.), ԼՀԲ, 2011, 1-2, էջ 30-42:
2. Թուրքյան Հ., Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձություններն ու «Մասունցի Դավիթ» էպոսը, Երևան, 2013:
3. Համբարձումյան Հ., Մասնա ծոեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ, Երևան, ԵՊՀ հրատ., 2018:
4. Համբարձումյան Հ., Անկախության «Մասնա ծոերը». էպոսը հայ արդի գրականության մեջ և հանրային դիսկուրսում, Երևան, 2021:
5. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:
6. Մատենագիրք Հայոց, ԻԱ հատ., գիրք Ա, Երևան, 2018:
7. Մասնա ծոեր, հատոր Բ, մաս Բ, Երևան, 1944: Մասնա ծոեր, հատ. Ա, 1936, հատ. Բ, մաս Ա, 1944, մաս Բ, 1951, հատ. Գ, 1979, հատ. Դ, 1999, Մասունցի Դավիթ, 1977:

■ АЙК АМБАРЦУМЯН

ОТ ЭПИЧЕСКОЙ ФОРМУЛЫ “ХЛЕБ И ВИНО, ЖИВ ГОСПОДЬ” ДО “С ВЕРОЮ ИСПОВЕДУЮ”: НЕРСЕС ШНОРАЛИ (БЛАГОДАТНЫЙ) И ЭПОС “САСНА ЦРЕР” (“САСУНСКИЕ УДАЛЫЦЫ”)

Резюме

Армянский национальный эпос “Сасна Црер” (“Сасунские Удалыцы”, “Давид Сасунский”) вобрал в себя многочисленные черты армянской средневековой культуры и истории. В одной из версий эпоса упоминается отрывок под названием “Молитва Нерсеса”, представляющий собой расширенное изложение известной формулы “Хлеб и вино, жив Господь”, дарующей силы героям эпоса. В других вариантах герои всегда вспоминают молитву святого Нерсеса Шнорали, произнося «С верой исповедую», перед важными событиями.

Формула “Хлеб и вино, жив Господь” в разных версиях эпоса имеет разное значения – клятва и молитва. Мы полагаем, что в первом случае его можно интерпретировать в связи с Ветхим Заветом, так как фраза “Жив Господь” распространенная клятва в Библии. Как молитва эта формула обнаруживает связи с письменными и устными молитвами, получившими широкое распространение в народе и пополнившимися новыми персонажами.

Упоминание молитвы Нерсеса Шнорали и сочетание с эпической формулой оберега, придающей силы героям, могут быть обусловлены несколькими обстоятельствами:

Сходная по жанру и функциям, она является защитной молитвой, а также заявлением о вере и декларацией религиозной идентичности. Подобно молитве Шнорали, эта магическая формула является прежде всего Символом веры, имеющим еще одну важную функцию – подчеркивание религиозной идентичности в среде неверующих.

Молитва святого Нерсеса Шнорали имела большое влияние в народной среде и была известна как “Молитва Нерсеса”. Сказители эпоса считают, что автором их родовой молитвы является также отец Нерсес, или что их молитва связана с этой молитвой. Этому явлению, скорее всего, способствовало и то, что в молитвенниках и других подобных сборниках издаваемых с 17-ого века молитва св. Нерсеса “С верой исповедую” по большей части предшествует псал-

мам Давида. В этом случае также возможна некоторая путаница из-за тематической общности и тождества имён персонажей.

И, наконец, есть идеологические общности. Давид Сасунский, его сын Мгер Младший в позднейшем коллективном культурном сознании воспринимаются как долгожданные спасители, богоизбранные цари, и подобные ожидания и идеи реализуются в произведениях Нерсеса Шнорали. Кроме того, и в эпосе, и в творчестве Шнорали первостепенное значение имеют идеи веры, родового или национального достоинства, наконец, сохранения идентичности.

Ключевые слова: *«Сасна Црер», эпос, «Сасунские Удальцы», «Давид Сасунский» Нерсеса Шнорали, «С верой исповедую», «Ветхий Завет», молитва, «Хлеб и вино, жив Господь»*

■ HAYK HAMBARDZUMYAN

**FROM THE EPIC FORMULA "BREAD AND WINE, THE LIVING LORD"
TO "I CONFESS WITH FAITH": NERSES THE GRACIOUS AND THE
EPIC "SASSNA TSRRER"**

Summary

"Sasna Tsrer" (Daredevils of Sassoun, Davit of Sassoun) is a national epic that encompasses numerous features of Armenian medieval culture and history, including folklore, ethnography, and artistic elements. One version of the epic mentions a verse called the "Prayer of Nerses," which is an expanded rendition of the well-known phrase "Bread and wine, the living Lord" that grants strength to the epic's heroes. In various other variants, the heroes always recall the prayer of Saint Nerses the Gracious, saying "I confess with faith," before significant events.

The phrase "Bread and wine, the Living Lord" serves a dual purpose in the different versions of the epic: as an oath and as a prayer. In the former case, we believe it can be interpreted in connection with the Old Testament. As a prayer, this formula reveals connections with written and oral prayers that have been widely spread among the people and augmented with new saints and characters.

The mention of the works of Nerses the Gracious and the combination with the empowering guardian formula in the epic, can be attributed to several circumstances. This prayer also holds an important

function in emphasizing the preservation of religious identity within an environment dominated by other religions.

Due to the fame and popularity of Saint Nerses the Gracious and his prayer "Confess with Faith," this prayer wielded significant influence and had a reputable status among the general populace, known as "Nerses's prayer." The epic narrators believe that the author of their ancestral prayer is also Father Nerses or that their prayer is somehow connected to his. The fact that the prayer of St. Nerses, "I confess with faith," mostly precedes the Psalms of David in prayer books, psalm collections, and similar published works since the 17th century likely contributes to this phenomenon. However, there might be some confusion arising from the thematic commonality and the similarity of character names.

And finally, there are ideological commonalities. Davit' of Sassoun, his son Pok'r Mher, are perceived as long-awaited saviors, God's chosen kings in the later collective cultural consciousness, and similar expectations and ideas are realized in the works of Nerses Gracious. In addition, both in Armenian epic and in St. Nerses's work, the ideas of faith, tribal or national dignity, and finally identity preservation are of the utmost importance.

Key words: *Armenian epic, Davit of Sassoun, Daredevils of Sassoun, prayer, Nerses the Gracious, "I Confess With Faith", "Bread And Wine, The Living Lord"*

- **Հայկ Աշոտի Համբարձումյան** – գրականագետ, էպոսագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի հրատարակչական բաժնի վարիչ և ավագ գիտաշխատող: «Զանգակ» հրատարակչության գրական ծրագրերի համակարգող և խմբագիր: «Շողակաթ» մշակութային-հանրային հեռուստաընկերության սցենարիստ, լրագրող, հաղորդավար: ՀԳՄ անդամ (2013):

Հայ ժողովրդական բանահյուսության, հայ հին, նոր ու ժամանակակից գրականության վերաբերյալ շուրջ վեց տասնյակ հոդվածների հեղինակ է: Հեղինակած գրքեր՝ «Զուգահեռ

ընթերցումներ» (2012), «Առասպելաատեղծ աշխարհայացք և ստեղծագործական մեթոդ»(2013), «Մասնա ծոեր. պատում. մոտիվ. գրքային ավանդույթ»(2018), «Անկախության «Մասնա ծոերը» (2021):

Айк Ашотович Амбарцумян – Литературовед, критик, эпосавед, переводчик, к.ф.н. Заведующий издательским отделом и старший научный сотрудник Матенадарана – научно-исследовательского Института древних рукописей им. Месропа Маштоца; редактор и координатор литературных программ издательства «Зангак»; редактор, сценарист, ведущий общественно-культурного телеканала «Шогакат». Член Союза писателей Армении (с 2013). Автор нескольких десятков статей по армянскому фольклору и армянской литературе и ряда монографий, в числе которых: «Сасунские удалыцы» в период независимости: «Армянский эпос в современной армянской литературе и в социальном дискурсе» (2021), «Сасна Црер: Сюжет, мотив, книжная традиция» (2018), «Мифологическое мировоззрение и творческий метод» (2013), «Параллельные чтения» (2012).

Hayk Ashot Hambardzumyan – Literary critic, translator, Ph.D. , Head of the publishing department and senior researcher of the Matenadaran - Research Institute of Ancient Manuscripts. Editor and literary project manager, of the Zangak Publishing House. Editor, screenwriter, TV host of the Armenian Cultural TV channel “Shoghakat”. Member of the Writers Union of Armenia (since 2013). Author of articles on Armenian folklore and Armenian literature and a monographs: “The Daredevils of Sassoun” in the Period of Independence: Armenian epic in contemporary Armenian literature and social discourse (2021), “Sasna Tsrer: Variant, Motif and Literary Tradition” (2018), “Mythological Worldview and Creative Method” (2013), “Parallel Readings” (2012).

Hayk.hambardzumyan1982@gmail.com